ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ. ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ 1876թ. ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆԸ

ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ

Ինչպես հայտնի է՝ 19-րդ դարի վերջին, 20-րդ դարի սկզբին օսմանյան Թուրքիան իրականացրեց նոր ժամանակների առաջին լայնածավալ ցեղասպանությունը, շուրջ երկու տասնամյակների ընթացքում մեթոդաբար բնաջնջելով Արևմտյան Հայաստանի և կայսրության այլ տարածաշրջանների հայ ազգաբնակչությանը: Այդ ոճրագործությունը նախապատրաստվեց և իրագործվեց թուրքական պետության կողմից՝ ի դեմս նրա տարբեր մակարդակի կենտրոնական ու տեղական մարմինների ու գերատեսչությունների, ինչպես նաև՝ հատուկ այդ նպատակով ստեղծված կառույցների: Ներգրավվեցին և օգտագործվեցին նաև մահմեդական ազգաբնակչության առանձին խմբեր: Ողջ գործունեությունը այդ ուղղությամբ ղեկավարվում էր պետական կառավարման բարձրագույն օղակի ընդերքում գործող միասնական կենտրոնի՝ սկզբում սուլթան Աբդուլ Համիդի և նրա պալատի հատուկ գաղտնի գրասենյակի, իսկ հետագայում՝ երիտթուրքական կուսակցության ղեկավար կորիզի կողմից: Այդպիսի լայնածավալ ոճրագործության նախապատրաստումը և իրագործումը պահանջեց թուրքական պետականության կողմից ողջ ուժերի կենտրանացում և համակարգված օգտագործում: Փաստորեն, 19-րդ դարի վերջին, 20-րդ դարի սկզբին ցեղասպանությունը դարձել էր թուրքական պետականության կարևոր գործառույթներից մեկը:

Այդ քաղաքականության բաղադրիչների և տարրերի մի մասը մշակվել ու կիրառվել էր Օսմանյան կայսրության պատմության նախորդ շրջաններում՝ ինչպես հայերի, այնպես էլ այլ հպատակ քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ: Մասնավորապես, հարյուրամյակներ շարունակ օսմանյան Թուրքիան քրիստոնյա ժողովուրդների դեմ իրականացրել էր կոտորածների քաղաքականություն՝ այն համարելով նրանց հպատակության մեջ պահելու ամենակարևոր արմատական միջոց: Հաջորդականությունը կոտորածների և ցեղասպանության միջև տարակուսանք չի հարուցում: Սակայն ցայսօր մասնագետները չեն անդրադառնել Օսմանյան կայսրությու-

նում ցեղասպանության, որպես պետական քաղաքականության, ակունքների համակողմանի ուսումնասիրմանը, չեն բացահայտել թուրքական իշխանությունների կողմից հպատակ քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ դարեր շարունակ իրականացված ճնշումների ու կոտորածների քաղաքականության՝ ցեղասպանության վերածման կոնկրետ պատմական փուլերը, ուղիները և ձևերը: Սույն հոդվածը անդրադարձ է այդ խնդրին:[1]

* * *

Ըստ էության, ցեղասպան քաղաքականությունն ունի երեք ատրիբուտ, որոնց առկայությունը բացարձակ անհրաժեշտություն է: Դրանք են. *զոհի գոյությունը, ոճրագործի գոյությունը, դիտավորության հանգամանքի առկայությունը:*

Մասնավորապես, արդյունավետ է անդրադարձը ցեղասպանության հայեցակարգի այնպիսի կարևոր բաղադրիչին, ինչպիսին է *դիտավորության հանգամանքը:*

Ցեղասպանության այդ կարևորագույն բնորոշիչներից մեկը՝ որևիցե ռասայական, ազգային կամ կրոնական խումբ ոչնչացնելու դիտավորությունը, ինչպես նաև ցեղասպանության բուն հայեցակարգը, գիտական շրջանառության մեջ է մտցրել ծագումով հրեա լեհ իրավագետ Ռաֆաել Լեմկինը: Հիմք ընդունելով ցեղասպանություն իրականացնողի դիտավորության (intent) հանգամանքը, նա բնութագրել է ցեղասպանությունը որպես որոշակի ազգային, կրոնական կամ ռասայական խմբի դեմ "հալածանքի կամ ոչնչացման նպատակով իրականացվող տարաբնույթ գործողությունների ընդհանրություն (composite)":[2]

Հետագա տարիներին ցեղասպանության հայեցակարգը ճշտվեց ու լրացվեց: 1946թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի առաջին նիստում ընդունված 96 (I) Բանաձևի նախաբանում նշվում էր, որ "ցեղասպանությունը (գենոցիդ) նշանակում է մարդկային խմբերի գոյության իրավունքի մերժում, այնպես, ինչպես որ մարդասպանությունը (հոմիցիդ) նշանակում է առանձին մարդկային էակի կյանքի իրավունքի մերժում":[3]

1947թ. ընդունված ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 180 (II) Բանաձևում վերևում նշված մոտեցումները ստացան ավելի հստակ ձևակերպում. "ցեղասպանությունը միջազգային ոճրագործություն է, որը հանգեցնում է առանձին անհատների և պետությունների ազգային և միջազգային պատասխանատվության»[4]: Այս ձևակերպումը կարևոր է նրանով, որ այստեղ առաջին անգամ ուղղակիորեն նշվում է ցեղասպանության ոճրագործության համար պետության պատասխանատվության խնդիրը:

Ցեղասպանության հայեցակարգի ստեղծման գործընթացն ավարտվեց 1948թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված "Ցեղասպանության հանցագործության կանխարգելմանման և դրա համար պատժի մասին" կոնվենցիայի ընդունմամբ:[5] Այստեղ տեղ գտած ցեղասպանության բնորոշումը հիմնականում կրկնում է Ռ. Լեմկինի բնորոշումը, մեկ կարևոր տարբերությամբ. ցեղասպանություն են համարվում ոչ միայն որևիցե "ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խմբի" լրիվ ոչնչացմանը, այլ նաև՝ մասնակի ոչնչացմանը նպատակաուղղված գործողությունները: Այս կատեգորիայի ներգրավումը ցեղասպանության բնորոշման մեջ արդարացված է հումանիստական տեսակետից, սակայն այն հանգեցնում է որոշ գործնական բնույթի դժվարությունների, քանի որ հարց

է առաջանում, թե խմբի ո՞ր մասի ոչնչացումն է համարվում ցեղասպանություն: Այդ դժվարությունը կարելի է հաղթահարել, ինչպես նշվում էր Կոնվենցիայի առաջին մեկնաբանություններից մեկում, անդրադառնալով դիտավորության հանգամանքին:[6]

Անցած տասնամյակների ընթացքում ցեղասպանության հայեցակարգը բազմիցս վերանայվել ու լրացվել է մասնագետների կողմից, սակայն դիտավորության հանգամանքը պահպանել է իր կենտրոնական նշանակությունը, ենթարկվելով միայն որոշ ճշգրտումների՝ ինչպես հասարակագիտական, այնպես էլ իրավագիտական առումներով: Այսպես, օրինակ, ցեղասպանության հասարակագիտական բնորոշման մեջ, որը տրվել է Ֆրենք Չոքի և Քուրթ Յոնասոնի կողմից 1990 թ. և հետագայում լայն տարածում է ստացել, մտադրվածությունը պահպանում է իր կենտրոնական նշանակությունը. "Ցեղասպանությունը միակողմանի զանգվածային սպանության ձև է, որով պետությունը կամ այլ իշխանություն մտադրվում է (intends) ոչնչացնել որևիցէ խումբ...":[7] Հելեն Ֆայնը ցեղասպանության իր հասարակագիտական բնորոշումներից մեկում է՝ ավելի է պարզեցրել ու հստակեցրել դիտավորության հանգամանքը, առաջարկելով այն պարզապես փոխարինել "հաշվարկված" բառով:[8] Այս ոլորտում հետագա ուսումնասիրությունները տանում են դեպի դիտավորության տարբեր աստիճանների բացահայտում, ինչպես այդ ցույց տվեց իր վերջերս հրատարակած հետաքրքիր դիտարկումներում Հենրի Հաթենբախը:[9]

Իրավագիտական գործառույթներում դիտավորության հանգամանքն ունի որոշիչ նշանակություն և եթե չի հաջողվում այն բացահայտել, ապա հնարավորություն է ստեղծվում ընդհանրապես խուսափել ցեղասպանության համար պատասխանատվությունից, ինչպես կոնկրետ օրինակների վերլուծության հիման վրա եզրակացնում է Լեո Քուփերը:[10]

Մեր օրերում որոշ երկրներ իրենց օրենսդրության մեջ դիտավորության հանգամանքին տալիս են ավելի մանրամասնված բնորոշում: Այսպես օրինակ, 1988թ. ԱՄՆ-ի Կոնգրեսը որոշում ընդունեց երկրում կիրառության մեջ մտցնել 1948թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված "Ցեղասպանության հանցագործության կանխարգելմանման և դրա համար պատժի մասին" կոնվենցիան և այնտեղ օգտագործվող ցեղասպանության բնորոշման մեջ տեղ գտած "դիտավորությամբ" տերմինի փոխարեն իր կողմից հաստատված փաստաթղթում ամրագրեց "որոշակի դիտավորությամբ" տերմինը:[11] Ֆրանսիական քրեական նոր օրենսդրությունը գնում է ավելի հեռուն և փոխարինում է "դիտավորություն" տերմինը "համակարգված պլանի իրագործում" արտահայտությամբ, ըստ էության կոնկրետացնելով դիտավորության հանգամանքը:[12]

Դիտավորության հանգամաքի կիրառումը գիտական հետազոտություններում հնարավորություն է ստեղծում տարբերազատել կոտորածը, որի դեպքում նման դիտավորության չկա, ցեղասպանությունից, ինչից հետևում է, որ այդ երկու երևույթների միջև, հասարակագիտական կամ իրավագիտական տեսանկյունից (բայց, իհարկե, ոչ բարոյական) դատելով, գոյություն ունի որակական տարբերություն:

Համաձայն ժամանակակից ցեղասպանագիտության մեջ տարածում ստացած տեսակետի, կոտորածի պարագայում դիտավորության հանգամանքը բացակայում է:[13] Ժամանակին Լևոն Չորբաջյանը իրավացիորեն նշել է, որ կոտորածը արտահայտվում է "վայրի սպանությունների"

տեսքով՝ ի տարբերություն ցեղասպանությանը, որի դեպքում առկա է "պլանավորված" լինելու հանգամանքը:[14]

Այսպիսով, հիմք ընդունելով ցեղասպանության հայեցակարգի հիմնական դրույթները՝ անդրադառնանք սույն հոդվածի հիմնական թեմային:

Հիմնական զոհի ընտրությունը

Թանզիմաթի բարեռորոգումների առաջին փուլի ընթացքում օսմանյան կառավարությունը փորձեց Բուլղարիայում իրականացնել որոշ սահմանափակ բնույթի բարեփոխումներ և այդպիսով կասեցնել բուլղարների ազատագրական շարժման վերընթաց զարգացումը: Սակայն այդ քաղաքականությունը մատնվեց անհաջողության, քանի որ 1850թ. բռնկվեց լայնածավալ զինված ապստամբություն թուրքական բռնապետության դեմ: Թեև այն հաջողվեց ճնշել միայն մեծ ջանքերի շնորհիվ, օգտագործելով և՛ կանոնավոր բանակը, և՛ բաշիբոզուկներին (զինված ելուզակներին), սակայն իշխանություններն ամեն ինչ արեցին, որ հետու պահեն մահմեդական ազգաբնակչությանն ապստամբների դեմ զինված գործողությունների մեջ ներգրավվելուց: Վիդինի վիլայեթի նորանշանակ վալի Ալի Ռըզա փաշային տրվեցին համապատասխան գրավոր ցուցումներ:[15]

Թանզիմաթի երկրորդ փուլի շրջանի սկզբում իշխանությունները փորձ արեցին Բուլղարիայում կիրառել ազգային հարցում իրենց մշակած նոր՝ "միաձուլման" (թուրքերեն նրանք օգտագործում էին "mezc-ü telifi"՝ "խառնում ու միացում" արտահայտությունը, իսկ ֆրանսերեն՝ "fusion"՝ "միաձուլում", "ձուլում" բառը) քաղաքականությունը, որի նպատակն էր Օսմանյան կայսրության քրիստոնյա հպատակների իրավունքները մահմեդականների իրավունքներին հավասարեցման և միասնական "օսմանյան ժողովրդի" ստեղծման քողի ներքո ձեռնամուխ լինել քրիստոնյա ժողովուրդների ուծացման գործընթացին և այդպիսով կասեցնել նրանց ազգային-ազատագրական պայքարի աճը:[16] Սակայն այդ քաղաքականությունը նույնպես մատնվեց անհաջողության և ազգային-ազատագրական շարժումը ոչ միայն չթուլացավ, այլ գնալով ձեռք բերեց ավելի մեծ թափ:

1867 և 1875թթ. այստեղ տեղի ունեցան զինված ընդվզումներ թուրքական բռնապետության դեմ, որոնք դաժանորեն ճնշվեցին:

Առավել վտանգավոր համարվեց վերջինը: Նրա ճնշման նպատակով իշխանություններն օգտագործեցին ոչ միայն բանակային ստորաբաժանումները, այլև ներգրավվեցին մահմեդական ազգաբնակչությանը՝ բաժանելով նրան զենք:[17] Սա անուղղակի վկայություն է առ այն, որ նրանք նախապատրաստվում էին իրականացնել շատ ավելի լայնածավալ գործողություն, քան թե պահանջվում էր այդ սահմանափակ ապստամբությունը ճնշելու համար: Ուշագրավ է, որ ապստամբությունը ճնշելուց հետո էլ իշխանությունները շարունակում էին ձեռնարկել "ակտիվ միջոցառումներ", ինչպես նշվում էր Ադրիանապոլիսում բրիտանական փոխհյուպատոսի կողմից ստացված հաղորդագրության մեջ. մասնավորապես, նրանք սկսել էին "զինյալների հավաքագրումը":[18]

Այս հաղորդագրությունը փաստում է թուրքական իշխանությունների շրջանում լայնածավալ բռնությունների քաղաքականություն իրականացնելու մտադրվածության ձևավորման վաղ փուլը, որը, դեռևս չունենալով

"ցեղասպանական դիտավորություն", միաժամանակ ազդարարում էր "ավանդական" միջնադարյան կոտորածների քաղաքականության՝ ցեղասպանության քաղաքականությանը վերածման գործընթացի սկիզբը:

Ըստ երևույթին այդ և նմանատիպ հաղորդագրությունների ազդեցության տակ Կ. Պոլսում գտնվող արտասահմանյան դիվանագետները, գլխավորապես Մեծ Բրիտանիայի դեսպան Հ. Էլիոթը և Ռուսաստանի դեսպան Ն. Պ. Իգնատևը, կանխազգալով բուլղարներին սպառնացող վտանգի հասունացումը, ձեռնարկեցին որոշակի քայլեր, նպատակ ունենալով կասեցնել այդ գործընթացը: Նրանք գործադրեցին ճնշում սուլթան Աբդուլ Ազիզի և մեծ վեզիր Մահմուդ Նեդիմ փաշայի վրա և հորդորեցին կայսրության բարձրագույն ատյաններին կիրառել բարենորոգումների և ոչ թե ֆիզիկական բնաջնջման քաղաքականություն:[19] Սուլթանը հրապարակեց հատուկ հրովարտակ և ազդարարեց բարենորոգումները շարունակելու իր կամքը, իսկ մեծ վեզիրը հեռագիր հղեց վալիներին (կուսակալներին) ու հրամայեց դադարեցնել քրիստոնյաների հետապնդումները:[20]

Ուշագրավ է, որ Մեծ վեզիրի որդեգրած մոտեցման հետ իրենց անհամաձայնությունն էին հայտնում և հրաժարական էին տալիս այդ տարիների ականավոր պետական գործիչներ Հյուսեյն Ավնի փաշան և Միդհատ փաշան:[21] Երկուսն էլ կողմնակից էին Բալկաններում և, մասնավորապես, Բուլղարիայում բիրտ ուժի օգտագործման վրա հիմնված քաղաքականությանը:[22] Հետագայում, ինչպես ցույց կտրվի ներքևում, այս գործիչները նորից հայտնվելով կառավարության կազմում, մշակեցին բուլղարներին ոչնչացնելու քաղաքականության ծրագիր:

Ինչպես երևում է Փիլիպոլիսում ռուսական փոխհյուպատոսի զեկուցագրից, Հյուսեյն Ավնին ու Միդհատը միայնակ չէին բուլղարների նկատմամբ ֆիզիկական հաշվեհարդարի քաղաքականություն իրականացնելու ցանկության մեջ: Տեղական իշխանությունները և, հատկապես, զապտիյեները[23] ոչ միայն չէին ենթարկվում մայրաքաղաքից ստացված հրամանին, այլև ավելի էին ուժեղացնում բռնությունները բուլղարների դեմ:[24] Աննախադեպ շատացել էր զապտիյեների կողմից իրականացվող սպանությունների թիվը:[25]

Կենտրոնական իշխանությունների ցեղասպանական բնույթի ծրագրերը բուլղարների նկատմամբ

1876 թ. մայիսի երկրորդ կեսերից Օսմանյան կայսրության տարբեր քաղաքներում գտնվող և՛ բրիտանական, և՛ ռուսական դիվանագետները համարյա միաժամանակ սկսում են ստանալ տեղեկություններ, որոնք վկայում են, որ այդ երկրի բարձրագույն իշխանություններն արդեն մշակել էին բուլղարների դեմ գործելու որոշակի ծրագիր և համապատասխան ցուցումներին էին տվել բուլղարական նահանգների տեղական իշխանություններին:

Ադրիանապոլսի բրիտանական փոխհյուպատոսի ստացած տեղեկության համաձայն, կառավարության կողմից հանձնարարականներ էին ուղարկվել տեղական իշխանություններին, որոնցով ցուցում էր տրվել նրանց "ոչնչացնել բուլղարներին" և սպանել վեց տարեկանից ցածր բոլոր արու մանուկներին: Այդ միջոցառումներով, նպատակ է դրվում "բնաջնջել ցեղը (race) և ստիպել մնացածին՝ արտագաղթել":[26] Այդ կարևոր տեղեկու-

թյան աղբյուրն է եղել օսմանյան բյուրոկրատիայի ազգությամբ ալբանացի մի ներկայացուցիչ:

Փիլիպոլիսի ռուսական փոխհյուպատոս Նայդեն Գեռովին, երբ նա ժամանակավորապես գտնվում էր մայրաքաղաքում, օգտագործելով իր անձնական կապերը կառավարության անդամներից մեկի հետ, հաջողել էր ստանալ կարևոր լրատվություն, որը միանշանակորեն հաստատում էր բրիտանացիների տեղեկությունները բուլղարներին բնաջնջելու պլանի գոյության մասին և լույս էր սփռում նրա որոշ կարևոր մանրամասների վրա: Ստորև ներկայացնում ենք այդ հաղորդագրությունը բնագրի լեզվով.

- "... Турецкое министерство... приняло решение, под предлогом подавления восстания, уничтожить совсем большие селения и местечки болгарские, жители которых продвинулись больше вперед, а прочие селения и города разорить грабежом башибозуков, лучших из городских жителей погубить тем или другим способом, истребить всю интеллигенцию и не оставить ни одного из учителей, воспитывавшихся в России, закрыть училища и раздавить народ до такой степени, чтобы лишить его всякой возможности оправиться когда-либо и придти опять в нынешнее состояние, чтобы быть опасным для господства турок, и, наконец, как можно будет отуречить часть его, чтобы еще больше ослабить его".[27]

Դժվար չէ նկատել, որ տարբեր աղբյուրներից ստացված այս տվյալները, որոնք տեղ են գտել տարբեր, ավելի ճիշտ, իրար հետ հակամարտող պետությունների պաշտոնական դիվանագիտական փաստաթղթերում, ըստ էության իրար լրացնում են և հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ, իսկապես, թուրքական կառավարական շրջանակներում գոյություն է ունեցել բուլղարներին՝ որպես էթնիկական խումբ ոչնչացնելու դիտավորությամբ ծրագիր: Այդ ծրագրի ցեղասպանական բնույթը տարակուսանք չի հարուցում:

Հետաքրքիր է համեմատել, թե ինչպե՞ս են վարվել Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի դեսպաններն իրենց ձեռքն ընկած տեղեկությունների հետ: Ն. Պ. Իգնատևը կցել էր Փիլիպոլիսի փոխհյուպատոսից ստացված վերոնշյալ հաղորդագրությունը ցարին ուղարկվող իր զեկուցագրին և ուղարկել այն Պետերբուրգ, այդպիսով հնարավորինս արագ տեղեկացնելով իր կառավարությանը բուլղարներին սպառնացող վտանգի մասին:[28]

Դեսպան Հ. Էլիոթը, որի անձնական բարեկամությունը Միդհատ փաշայի հետ ժամանակակիցների համար գաղտնիք չէր, ըստ էության, չէր վստահել այդ տեղեկություններին և Սալոնիկիի բրիտանական հյուպատոսին դիմել էր մեծագույն զգուշավորությամբ ձևակերպված "հատուկ խնդրանքով" (sic!). պարզել, արդյո՞ք մահմեդականների հարձակումները քրիստոնյաների վրա կարող են լինել "նախապես պատրաստված հարձակման" արդյունք:[29] Որքանով կարելի է եզրակացնել հրապարակված բրիտանական փաստաթղթերից, նա այդպես էլ Լոնդոնին տեղյակ չպահեց իր ստացած կարևոր տեղեկության մասին: Դրա պատճառը, կարելի է ենթադրել, այն էր, որ նրան հայտնի էր, որ այդ հրեշավոր ծրագրի հեղինակներից էր Միդհատ փաշան, որը հենց նույն Էլիոթի անվերապահ աջակցությամբ ղեկավարում էր սահմանադրական շարժումը մայրաքաղաքում:

Մինչդեռ ռուսական դիվանագիտությանը հաջողվել էր պարզել, որ բացի Միդհատից այդ ծրագրի հեղինակությունը պատկանում էր նաև վերը

նշված Հյուսեյն Ավնի փաշային, իսկ վերջնական որոշումը ընդունվել էր կառավարության նիստի ընթացքում:[30] Ռուս դիվանագետները հայտնում էին, որ կառավարության որոշումը վերաբերում էր ոչ միայն բուլղարների բնաջնջմանը, այլ նաև Բալկանյան թերակղզու ողջ սլավոնական ազգաբնակչության "սիստեմատիկ կոտորելուն":[31]

Այդ ամիսներին Կ. Պոլսում գտնվող երիտասարդ ռուս թուրքագետ Վասիլի Սմիռնովը[32], հենվելով "ստամբուլյան հարաբերություններին լավ ծանոթ մարդկանցից" ստացված տեղեկությունների վրա, տալիս է երեք թուրք պետական գործիչների անուններ, ովքեր կազմում էին, ըստ իր բնութագրման, "բուլղարական սարսափների դժոխային եռյակը". նրանք էին, բացի Միդհատ փաշայից, այդ տարիների խոշոր պետական գործիչ ու ճանաչված բառարանագետ Ահմեդ Վեֆիք փաշան և "նոր օսմանցիների" շարժման առաջնորդներից Ալի Սուավին:[33] Նրանք, ըստ Սմիռնովի, նպատակադրվել էին "սիստեմատիկորեն ոչնչացնել իրենց համար ատելի բուլղարներին և ... համառորեն հետևում են իրենց ծրագրին...":[34]

Շարունակելով հետաքրքրվել այդ խնդրով ռուսական դիվանագետները կարողացան բացահայտել այդ ցեղասպանական ծրագրի մի շարք այլ մանրամասներ: Համաձայն Ռուսե քաղաքաքի ռուսական գլխավոր հյուպատոս Վ. Ֆ. Կոժևնիկովի ստացած տեղեկությունների, կայսրության մայրաքաղաքում Միդհատ փաշայի ղեկավարությամբ գործում էր գաղտնի կոմիտե՝ "Սյուփյուրգե" ("Ավել") անվանումով: Ըստ այդ տեղեկության "Սյուփյուրգեի" թիրախը միայն բուլղարները չէին, նրա նպատակն էր ոչնչացնել երկրի ողջ քրիստոնյա ազգաբնակչությանը:[35]

Այդ ոճրագործ խմբակի գոյության փաստը ռուսական դիվանագիտությանը հայտնի էր դարձել 1876 թ. նոյեմբերին: Սակայն, ըստ երևույթին, այն ստեղծվել էր ավելի վաղ, դեռևս այդ նույն տարվա մայիսին, երբ կառավարությունը Միդհատի և Հյուսեյն Ավնիի ճնշման ներքո ընդունել էր վերոհիշյալ որոշումը բուլղարներին ոչնչացնելու մասին: Հետագայում, Հյուսեյն Ավնիի սպանությունից հետո (նույն թվականի հունիսի 15-ին), այն համալրվել էր նոր անդամներով (հայտնի են Վեֆիք փաշայի և Ալի Սուավիի անունները), սակայն, ինչպես վկայում է հաղորդագրությունը "Սյուփյուրգեի" մասին, Միդհատը պահպանել էր իր ղեկավար դիրքը:

* * *

1876թ. երկրորդ կեսի ընթացքում մահմեդական հոգևորականության հակաքրիստոնեական քարոզչությունը գնալով սաստկանում է: Այդ փաստն արձանագրել է ժամանակի մամուլը:[36] Հետզհետե այն ընդունում է քրիստոնյաներին ֆիզիկական բնաջնջման կոչերի ձև: Այդ փաստը չէր վրիպել ռուսական դիվանագետների ուշադրությունից: Ինչպես հայտնում է դեսպան Իգնատևը ցարին՝ "խոջաները" սկսում են բացեիբաց հանդես գալ "գյավուրներին" ոչնչացնելու կոչերով:[37]

Նկատվում է գործողությունների և քարոզչության որոշակի համակարգում՝ բարձրագույն իշխանությունների և մահմեդական հոգևորականության գործողությունների միջև: Սակայն տարակուսանք չի հարուցում, որ նախաձեռնությունը պատկանում էր կառավարությանը, և պատճառը ոչ միայն և ոչ այնքան մահմեդական մոլեռանդությունն էր, որը դարեր շարունակ գոյություն ուներ Օսմանյան կայսրության մահմեդական ազգաբնակչության միջավայրում, այլ՝ երկրի բարձրագույն իշխանությունների նոր

քաղաքականությունը բուլղարների և այլ քրիստոնյաների նկատմամբ: Այս կարևոր հանգամանքն ընդգծել է դեռևս այդ իրադարձությունների ժամանակիցը՝ դեսպան Իգնատևի անձնական ֆոնդում այլ ձեռագրերի հետ պահվող անստորագիր վերլուծական տեղեկագրի հեղինակը: Նա գրում է. "Առաջներում քրիստոնյաներին ճնշում ու ջարդում էին մահմեդականները, այժմ նրանց ճնշում ու ջարդում է կառավարությունը":[38] Այդ տեսակետը կիսում էր նաև Իգնատևը: Պետերբուրգ ուղարկած իր զեկուցագրերից մեկում նա ընդգծում է, որ ուժեղացող մահմեդական մոլեռանդության պատճառը թուրքական կառավարման համակարգի ներկայացուցիչների մեծ մասի գործողություններն են՝ ամենավերևում գտնվողից մինչև ամենաստորինը:[39]

Կարելի է արձանագրել, որ ամռան և աշնան ամիսներին ոճրագործ խմբակի ծրագրերն ընդլայնվել էին, և նրանք սկսել էին նախապատրաստել կայսրության ողջ քրիստոնյա ազգաբնակչության զանգվածային կոտորած: Դրա մասին է վկայում ոչ միայն Վ. Ֆ. Կոժևնիկովի վերընշյալ հաղորդագրությունը: Դեռևս հոկտեմբերին Իգնատևը հաղորդում էր Ալեքսանդր Գորչակովին, որ "լիովին հիմնավորված է ներքին կոտորածների [առիթով] վախը":[40]

Փաստերը վկայում են, որ 1876թ. վերջին ամիսներին թուրքական իշխանությունները պատրաստվում էին կազմակերպել լայնածավալ կոտորած նաև հայ ժողովրդի դեմ: Արդեն հոկտեմբերի սկզբներին հայկական մամուլն արձանագրեց հայերի դեմ ուղղված մահմեդական մոլեռանդության ուժեղացման լիաստը, միաժամանակ զգուշորեն ենթադրելով, որ այդ տեղի է ունենում տեղական իշխանությունների թողտվության պայմաններում:[41] Նույն ժամանակահատվածում թուրքական մամուլը, մասնավորապես կառավարության շեփորը հանդիսացող "Բասիրեթ" լրագիրը, մեղադրում է հայերին, թե իբր նրանք՝ Պոլսի պատրիարքի ղեկավարությամբ նախապատրաստում են զինված ապստամբություն[42], այդպիսով հող նախապատրաստելով նրանց կոտորածի համար:

Ռուսական դիվանագիտական աղբյուրները հնարավորություն են տալիս պատկերացում ստանալ այդ ծրագրի որոշ մանրամասների մասին: Հոկտեմբերին Գորչակովին հղած իր զեկուցագրերից մեկում Իգնատևը, հենվելով Պոլսո հայ պատրիարքի կողմից իրեն հայտնած տեղեկության վրա, գրում է, որ Միդհատը մեղադրել է հայերին, թե իբր նրանք մեծ քանակությամբ զենք են գնել արտասահմանում և նախապատրաստում են ապստամբություն Ռուսաստանի հետ սահմանամերձ շրջաններում, որպեսզի "ապահովեն Ռուսաստանի միջամտությունը":[43]

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ կոտորածն իրականացվելու էր հենց այդ պատրվակով: Նմանությունը "երիտասարդ" կամ "նոր" օսմանցիների" առաջնորդի և երիտթուրքերի պարագլուխների գործելակերպի միջև ակնառու է: Հետաքրքիր է նշել, որ Ռուսաստանի գործոնը մեծ դեր է խաղացել նաև Միդհատի հակաբուլղարական ծրագրերում: Իգնատևի զեկուցագրերից մեկում բերված են Միդհատ փաշայի հետևյալ խոսքերը, ուղղված բուլղարների ներկայացուցիչներին. "Դուք ձեր հույսը դնում եք Ռուսաստանի վրա, սակայն երբ նա վերջիվերջո կգա, նա կգտնի միայն ավերակներ":[44] Նոյեմբերի վերջերին Կ. Պոլսի ռուս դեսպանը մեկ անգամ ևս հայտնեց Պետերբուրգին, թե հյուպատոսները հաղորդում են, որ Օսմանյան կայսրության ողջ տարածքի վրա շարունակվում է քրիստոնյա-

ների «աղաղակող ճնշումը», ընդ որում, ոչ միայն սլավոնների, այլ նաև "Փոքր Ասիայի քրիստոնյաների":[45]

Ահա այս պայմաններում էր, որ տեղի ունեցավ Վանի դեկտեմբերի 1-ի հայտնի հրկիզումը, կազմակերպված տեղի թուրքական իշխանությունների կողմից: Այդ իրադարձությանը հայրենական պատմագիտությունը բազմիցս անդրադարձել է, սակայն դիտարկել է այն որպես մեկուսի երևույթ: Մինչդեռ, ինչպես վկայում է իր կոնֆիդենցիալ զեկուցագրում Իգնատևին՝ վերջինիս գաղտնի գործակալ Պ. Անինոն, որը Միդհատի օգնականն էր և անձնական թարգմանիչը և այդպիսով լավատեղյակ էր երկրի անցուդարձին, այդ թվում նաև այնպիսի իրադարձություններին, որոնք իշխանությունները պահում էին գաղտնի, համարյա միաժամանակ թուրքական կանոնավոր բանակն իրականացրեց "գազանություններ Յոզղատի հայկական գյուղերում":[46] Անտարակույս, բանակը ստացել էր համապատասխան հրաման: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ հայերի դեմ նախապատրաստվող կոտորածի վտանգը բավական իրական էր:

* * *

Ի մի բերելով փաստերը, կարելի է եզրակացնել, որ թուրքական բարձրագույն իշխանությունների հակազդեցությունը 1876թ. Բուլղարիայում ծավալված ազգային-ազատագրական շարժմանը, իր մեջ պարունակում էր ցեղասպանության քաղաքականության կարևոր տարրեր: Մասնավորապես, բրիտանական ու ռուսական դիվագիտական փաստաթղթերի քննությունը ցեղասպանագիտության լույսի ներքո հնարավորություն տվեց բացահայտելու բուլղարներին՝ որպես առանձին էթնիկական միավոր ոչնչացնելու ծրագրի գոյությունը: Այդ ծրագիրը կազմվել էր մի խումբ թուրք բարձրաստիճան պաշտոնյաների կողմից և հավանություն էր արժանացել կառավարության նիստում, ստանալով պաշտոնական փաստաթղթի կարգավիճակ: Ի կատարումն այդ ծրագրի՝ համապատասխան ցուցումներ են տրվել տեղական իշխանություններին: Այսպիսով, թուրքական իշխանությունների կողմից բուլղարների դեմ իրականացված գործողություններում առկա է *դիտավորության հանգամանքը*: Վերը նշվածը վկայում է, որ թուրքական իշխանությունների հակազդեցությունը 1876թ. բուլղարական ապստամբությանը պարունակում էր հստակ արտահայտված ցեղասպանական դիտավորության հանգամանք, ինչը հնարավոր է դարձնում բնութագրել այն որպես միջանկյալ փուլ կոտորածի և ցեղասպանության քաղաքականությունների միջև: Հետագայում, 1876թ. աշնանն այդ խմբի հանցավոր ծրագրերն ընդլայնվեցին և սկսեցին վերաբերել երկրի ողջ քրիստոնյա ազգաբնակչությանը, այդ թվում նաև հայերին: Ուշագրավ է, որ բոլոր երեք վկայություններն էլ, որոնք պարունակում են տեղեկություններ այդ խմբի մասին, հիշատակում են օսմանյան Թուրքիայի հայտնի պետական գործիչ և սահմանադրական շարժման առաջնորդ Միդհատ փաշայի անունը, իսկ փաստաթղթերից մեկն ուղղակի նշում է, որ այդ խմբի ղեկավարը նա էր:

Գոյություն ունեն նաև այլ վկայություններ, որոնք հաստատում են, որ Միդհատի՝ քրիստոնյաների և մահմեդականների միջև "եղբայրություն և հավասարություն" հաստատելու անհրաժեշտության մասին հրապարակայնորեն արվող հայտարարություններն ընդամենը քաղաքական հնարք էին և քողարկում էին նրա բուն հայացքները: Այսպես օրինակ, Միդհատը,

համաձայն նրան անձամբ ճանաչող ֆրանսիացի Բենուա Բրունսվիկի, իրականում այն կարծիքին էր, որ թուրք դեկավարների ներկա սերնդի "նախնիները սխալվեցին, չստիպելով մեր հպատակներին ... ընդունել իսլամ: Այդ պետք է սկսել: Այսուհետև պետք է օգտագործել բոլոր հնարավորությունները, որպեսզի փոխենք հօգուտ մեզ երկու կրոնների [ի նկատի ունի իսլամը և քրիստոնեությունը – Ռ. Ս.] միջև գոյություն ունեցող թվային հարաբերակցությունը".[47]

Այդ գործիչը, որը համարվում է Թուրքիայի պատմության ամենաառաջադեմ և լուսավորյալ պետական այրերից մեկը, իրականում հիմքը դրեց այն ցեղասպան քաղաքականության, որը տասնամյակներ անց վարեցին հայ ժողովուրդի դեմ Արդուլ Համիդը և երիտթուրքերի պարագլուխները:

Միդհատի և նրա գործակիցների ծրագրերը չիրականացան ի թիվս այլոց նաև այն պատճառով, որ 1877թ. հունվարին Միդհատը արտաքսվեց երկրից:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Այդ հարցադրման առաջին փորձերից էր մեր հետևյալ հոդվածը. Սաֆրաստյան Ռ. Ս. Ցեղասպանության ակունքները միջնադարյան Օսմանյան կայսրությունում. «Պատմա-բանասիրական հանդես», 1998, 1-2, էջ 105-112:

[2] Raphael Lemkin on Genocide. - In: Genocide and Human Rights: A Global Antology. Ed. by Porter J. N. Lanham-New-York-London, 1982, p. 330.

[3] Leo Kuper. Genocide: Its Political Use in the Twentieth Century. New Haven and London, 1981, p. 23.

[4] Սեջերումն ըստ. Решетов Ю. А. Борьба с международными преступлениями против мира и безопасности. Москва, 1983, с. 102.

[5] Անգլերեն տեքստը տե՛ս. Leo Kuper. Genocide.., p. 210-214.

[6] In favor of the Ratification of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide. Presented to The Subcommittee on the Genocide Convention of the Senate Foreign Relations Committee. - Armenian Affairs: A Journal on Armenian Studies, 1950, Vol. 1, No. 2, p. 221.

[7] Franc Chalk and Kurt Jonassohn. The History and Sociology of Genocide: Analyses and Case Studies, New Haven and London, 1990, p. 23.

[8] Helen Fein. Testing Theories Brutally: Armenia (1915), Bosnia (1992) and Rwanda (1994). – Problems of Genocide: Proceedings of the international Conference on "Problems of Genocide", April 21-23, 1995, National Academy of Sciences, Yerevan, Republic of Armenia, Cambridge, MA, 1997, p. 182.

[9] Henry R. Huttenbach. From the Editor: Towards a Conceptual Definition of Genocide. - Journal of Genocide Research, 2002, 4(2), p. 167–176.

[10] Leo Kuper, Genocide…, p. 33-35.

[11] Տե՛ս այդ փաստաթղթի տեքստում. Franc Chalk and Kurt Jonassohn. The History and Sociology of Genocide: Analyses and Case Studies, New Haven and London, 1990, p. 51.

[12] Տե՛ս այդ մասին. Uwe Makino. Final Solutions, Crimes Against Mankind: on the Genesis and Criticism of the Concept of Genocide. - Journal of Genocide Research, 2001, 3(1), p. 67.

[13] Տե՛ս, օրինակ. Christian P. Scherrer. Towards a Theory of Modern Genocide. Comparative Genocide Research: Definitions, Criteria, Typologies, Cases, Key Elements, Patterns and Voids. - Journal of Genocide Research, 1999, 1(1), p. 15.

[14] Chorbajian L. A. Massacre or Genocide: An Essay in Personal Biography and Objective Experience. - In: Genocide and Human Rights: A Global Anthology. Edited by Porter J. N. Lanham-New-York-London, 1982, p. 121.

[15] Տե՛ս սուլթանի կողմից Ռըզա փաշային տրված "բարձրագույն ցուցումները" պարունակող փաստաթղթի տեքստում, որը հրապարակել է թուրք ճանաչված միջնադարագետ Հալիլ Ինալջըքը. Ferikan-ı kiramdan bu def'a memuriyet-I mahsusa ile Vidin canibine izam buyrulacak Rıza Paşa hazretlerine talimat-ı seniyye müsvedesi. - Halil Inalcık, Tanzimat ve Bulgar Meselesi (Doktora Tezi'nin 50. yılı, 1942-1992), İstanbul, 1992, Vesikalar V, s. 124.

[16] Ավելի հանգամանալից այդ քաղաքականության բնութագրմանը անդրադարձել ենք հետևյալ հոդվածում. Սաֆրաստյան Ռ. Ա. Օսմանացման քաղաքականության պատմությունից, Արևելագիտության հարցեր. գիտական աշխատությունների միջբուհական ժողովածու, պրակ 1-2, Երևան, 1983, էջ. 193–202:

[17] Геров Н.– Игнатьеву Н. П., 22 марта 1876 г. Приложение. – Документи за българската история. Т. 2 : Архив на Найден Геров. Ч. 2, София, 1932, с. 153.

[18] Տե՛ս այդ մասին. Rev. J. Clarke to British Vice Consul in Adrianople Dupuis J. H., October 15, 1875. – In : The Near and Middle East, 1856-1914 Part I : British Documents on Foreign Affairs. Series B: Near and Middle East, Volume 2 : The Ottoman Empire: Revolt in the Balkans, 1875-1876. Editor : Gillard D., Bethesda, 1985, p. 137-138.

[19] Տե՛ս այդ մասին. Roderic Davison, Reform in the Ottoman Empire, 1856-1876. Princenton, 1963, p. 315-317; Записки графа Игнатьева Н. П. – Исторический вестник, 1914, т. 135, с. 454.

[20] Геров Н. –Игнатьеву Н. П., 3 ноября 1875 г. – Документи за българската история. Т. 2 : Архив на Найден Геров. Ч. 2, София, 1932, с. 126.

[21] Խոսքը նույն Միդհատ փաշայի մասին է, որը համարվում է օսմանյան առաջին սահմանադրության "կնքահայրը":

[22] Տե՛ս Roderic Davison. Reform.., p. 317; Фадеева И. Е. Мидхат-паша: Жизнь и деятельность. Москва, 1977, с. 71.

[23] Այդպես էին անվանվում ոստիկանական զինված ստորաբաժանումների անդամներին:

[24] Геров Н.– Игнатьеву Н. П., 3 ноября 1875 г. – Документи за българската история. Т. 2 : Архив на Найден Геров. Ч. 2, София, 1932, с. 126.

[25] Նույն տեղում:

[26] Dupuis J. H. to Elliot H., May 19, 1876. – In: The Near and Middle East, 1856-1914 Part I : British Documents on Foreign Affairs. Series B: Near and Middle East, Volume 2 : The Ottoman Empire: Revolt in the Balkans, 1875-1876. Editor : Gillard D., Bethesda, 1985, p. 234.

[27] Вице-консул в Филипполе - Послу в Константинополе, 17 мая/29 мая 1876г., копия, прил. к предыд. – Архив Внешней Политики России (АВПР), ф. Канцелярия МИД, 1876, д. 25, лл. 159об – 160. Գեռովի անձնական արխիվում պահպանվել է այդ փաստաթղթի մեկ այլ օրինակ, որը ժամանակին հրապարակվել է Բուլղարիայում : Այն էականորեն չի տարբերվում Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվում պահվող օրինակից: Տես. Доклад Герова. Константинополь, май 1876г. - Документи за българската история. Т. 2 : Архив на Найден Геров. Ч. 2, София, 1932, с. 168-169.

[28] Игнатьев - Царю, 21 мая/2 июня 1876г. - АВПР, ф. Канцелярия МИД, 1876, д. 25, лл. 148 - 154.

[29] Elliot H. to Blunt J. E. – In: The Near and Middle East, 1856-1914 Part I : British Documents on Foreign Affairs. Series B: Near and Middle East, Volume 2 : The Ottoman Empire: Revolt in the Balkans, 1875-1876. Editor: Gillard D., Bethesda, 1985, p. 238.

[30] Вице-консул в Филипполе - Послу в Константинополе. 17 мая/29 мая 1876г., копия, прил. к предыд. – АВПР, ф. Канцелярия МИД, 1876, д. 25, лл. 159об.

[31] Из донесения Даскалова Н. (Варна) генеральному консулу России в Русе Кожевникову В. Т., 24 августа 1876 г. – В кн.: По следите на насилието: Документи и материали за налагане на ислам. Част първа. Съставител Петър Петров, София, 1987, с. 184.

[32] Վերադառնալով հայրենիք Վ. Սմիռնովը ծավալեց բեղմնավոր գիտամանկավարժական գործունեություն և դասվեց ռուսական թուրքագիտության ճանաչված դեմքերի շարքին: Նրա գիտական գործունեության ու պատմագիտական հայացքների մասին տե՛ս Твертинова А. С., Смирнов В. Д. - историк Турции (К 125-летию со дня рождения). - Советская тюркология, 1971, 4, с. 103-114.

[33] Смирнов В. Официальная Турция в лицах. Stambul und das moderne Türkenthum. Politische, sociale und biographische Bilder, von einem Osmanen, Leipzig, 1877. - Вестник Европы, 1878, кн. 1, с. 311.

[34] Նույն տեղում:

[35] Кожевников В. Ф. - Игнатьеву Н. П., 12 ноября 1876 г., Приложение. – Освобождение Болгарии от турецкого ига: документы в трех томах. Том первый: Освободительная борьба южных славян и Россия, 1875-1877. Под ред. Никитина С. А., Конобеева В. Д., Бурмова Ал. К., Тодорова Н. Т. Москва, 1961, с. 501.

[36] Տե՛ս, օրինակ, «Մեղու Հայաստանի», 3 հուլիսի 1876:

[37] Игнатьев - Царю, 21 мая/2 июня 1876г. - АВПР, ф. Канцелярия МИД, 1876, д. 25, л.153ов.

[38] Записка (без подписи) "О смысле кризиса, происходящего в настоящее время в Турецкой империи и о влиянии происходящих в ней реформ на ее государственный строй". – Государственный Архив РФ (ЦГАОР СССР), ф. 730 (фонд Н. П. Игнатьева), оп. 1, ед. хр. 706.

[39] Игнатьев - Горчакову, 18/30 октября 1876г. - АВПР, ф. Канцелярия, 1876, д. 32, л. 150.

[40] Игнатьев - Горчакову, 13/25 октября 1876г. - АВПР, ф. Канцелярия, 1876, д. 32, л. 27.

[41] Տե՛ս «Մեղու Հայաստանի», 2 հոկտեմբերի, 1876:

[42] Այդ մասին հաղորդում էր նույն «Մեղու Հայաստանի» լրագիրն իր հոկտեմբերի 23-ի համարում, հղելով Պոլսո "Նորագիրը":

[43] Игнатьев - Горчакову, 18/30 октября 1876г. - АВПР, ф. Канцелярия, 1876, д. 32, л. 137 об – 138.

[44] Игнатьев - Гирсу, 24 мая/5 июня 1876г. - АВПР, ф. Канцелярия МИД, 1876, д. 25, л. 153 об.

[45] Игнатьев - Горчакову, 18/30 ноября 1876г. - АВПР, ф. Канцелярия, 1876, д. 32, л. 539-539 ов.

[46] Анино П.- Игнатьеву Н. П., 1876. – Государственный Архив РФ, ф. 730 (фонд Н. П. Игнатьева), оп. 1, ед. хр. 917.

[47] Bruswick B. La vérité sur Midhat Pacha. Paris, 1877, p. 4.

Резюме

Вокруг вопроса об истоках политики геноцида в Османской империи. Реакция на болгарское восстание 1876г.

Рувен Сафрастян

В статье впервые рассматривается реакция турецких властей на болгарское восстание 1876г. с точки зрения геноцидологии. Автор приходит к мнению, что реакция является переходным этапом от "традиционной" политики погромов Османской империи до политики геноцида.

Summary

On the Problem of the roots of the Policy of Genocide in the Ottoman Empire: The Response to the Bulgarian Uprising of 1876.

Ruben Safrastyan

In the paper for the first time the responce of Turkish authorities to the Bulgarian Upprising of 1876 is beeng reviewed from the stand point of the Genocidology. Author draws conclusion that the responce constitued a transitional stage from "traditional" for the Ottoman Turkey policy of massacres towards to the genocide policy.